ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 33

«14» ապրիլի 2020 թվական **գյուղ Մայիսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ՀՏԶՀ) ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ (ՄՆՏԶ) ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԱՐՄԱՇԵՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ՝ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԶԻՆՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ» ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով Մարմաշեն համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է**

1.Տալ համաձայնություն Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող և Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման (ՄՆՏԶ) ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի «Մարմաշեն խոշորացված համայնքի կոմունալ ծառայությունների բարելավում՝ տեխնիկական վերազինման միջոցով» ծրագրին մասնակցելու:

2.Սահմանել որ՝

1)ծրագրի արժեքը կազմում է 171,512,700 (մեկ հարյուր յոթանասունմեկ միլիոն հինգ հարյուր տասներկու հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 8,575,635 (ութ միլիոն հինգ հարյուր յոթանասունհինգ հազար վեց հարյուր երեսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամը ներդնում է համայնքը՝ Մարմաշեն համայնքի 2020 թվականի բյուջեի 6/1/1 գործառնական դասակարգման

(5129) «Այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերում» տնտեսական դասակարգման հոդվածից,

2)ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Մարմաշեն համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
ՄԱՆՈՒԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----------	----------	----------
ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	----------	----------	----------
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝	----------	----------	----------
ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝	----------	----------	----------
ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝	----------	----------	----------
ԶԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«14» ապրիլի 2020 թվական

գյուղ Մայիսյան